

Ճանապարհորդութիւններէց մի հետաքրքրական և կրթիչ բան է պատմում:

Երէց անդամները մեծ ազդեցութիւն ունին թէ՛ դպրոցի յառաջադիմութեան և թէ՛ փոքրների բարքի վերայ, թէև նոցա ոչ մի արտօնութիւն կամ իրաւունք չէ վերապահուած: Գպրոցի երրորդ նորութիւնը կարգ և կանոն պահպանելու եղանակն է: Ամեն մի դասարանից (Թուով հինգ) նոյն իսկ աշակերտների ձեռքով ընտրուում է մի աւագ որ և պատասխանատու է ընկերների կողմից և իրաւունք ունի իւր ընկերներից պահանջել անպայման հնազանդութիւն դպրոցում տիրող կարգերին: Կրթութեան և դանակի չորրորդ նորութիւնը «շրջան» կոչուած ժողովներն են:

Երկու շաբաթը մի անգամ սովորաբար շաբաթ օրերը ժողովուում են ուսուցիչները և աշակերտներն ի միասին, ժողովի կառավարիչը ինքը նեպոլիւն է: Ժողովը զուտ ընտանեկան բնաւորութիւն է կրում: Ժողովի նիւզին է դպրոցի անցեալ երկու շաբաթուայ կեանքը, նիստը բացուում է օրագիր յիշատակարանի ընթերցմամբ, ուր նշանակուած են օրապահի ձեռքով այդ շաբաթուայ մէջ կատարուած բոլոր դէպքերը, նախորդ ժողովի խօսակցութեանց նիւթը, «ընկերական խորհուրդներն», վերջապէս զրուցատրութեանց նիւթը: Այդ յիշատակարանի մէջ արձանագրուած է լինում դպրոցների հոգաբարձուի ուսուցիչների աւագների գիտողութիւնները, այնպէս որ այդ յիշատակարանը մի կատարեալ քրտնիկոն է: Գպրոցների յիշատակարանին մենք մեծ նշանակութիւն ենք տալիս, ասել է ուսուցիչներից մէկը մի ճանապարհորդի որովհետև նա մեզ առիթ է ներկայացնում մի անգամ ևս վայելել այն պայծառ և ուրախ բոպէները, երբ յուզուել են մեր սրտերը, տեսնել և այն շարիքը, որ անցել է մեր գլխով... վերջապէս այս առթիւ աշակերտները սովորում են լաւ և կանոնաւոր միտք արտայայտել և դիտել ու նկարագրել ինչ որ կատարուում է դպրոցում: Այս խնդիրներից յետոյ կարգացում է և «յանցաւորների գիրքը»: Արովհետև դպրոցում ոչ մի պատիժ չկայ, ուստի ընդհանուրի համակրութիւնը կամ հակակրութիւնը միակ զրդիչն է յանցաւորներին ուղղութեան գալու՝ հէնց այդ պատճառով էլ հրապարակ է հանուում մէն զանցառութիւն և հասարակաց դատաստանին ենթարկուում, որ՝ ըստ վկայութեան դպրոցին մօտից ծանօթների, մեծապէս ազդում է յանցաւորի վերայ:

Ինքնակրթութեան մի այլ միջոց է «ընկերական խորհուրդը», ուր աշակերտները իրենց զխի կատարեալ տէրերն են: Հինգերորդ դասատան աւագը նախագահում է. ոչ մի ուսուցիչ կամ կողմնակի անձն նրանց չի խանգարում: Խորհրդի նիւթը իրենց օրական կեանքում բարձրացած հարցերն են: Արովհետև շաբաթ օրերն են թէ՛ խորհուրդները և

թէ՛ «ժողովները», այլ և ամէն շաբաթ ըստ ընկերական գնում, ուստի այդ օրերը դաս չկայ: Կիրակի օրերը նշանակուած է զրուցատրութիւն, (ընդհանուր կամ մասնաւոր): Սա զուտ կրօնական ժողով է, որ կամ ն. ն. ը կամ ուսուցիչներից միւր բացատրում է աւետարանից մի բարոյական խնդիր: Ներկայ գտնուողներից ամէն ոք իրաւունք ունի հակաձայնել կամ բացատրութիւն պահանջել իւր համար մութ մնացած մի կէտի նկատմամբ: «Մասնաւորները» (զրուցատրութիւն) լինում են դասարանում ուսուցիչների ձեռքով, որոնց համար մշակուած ծրագիր և բնարաններ կան: Ա. դասարանի համար՝ աղօթքի բացատրութիւն. Բ-ի համար քրիստոնէական աշխարհայեցողութիւն, Գ-ի՝ բրիս. հոգու ներդաշնակութիւն, Դ-ի՝ զանազան քարոզիչների, յատկապէս Բերսիէի՝ քրիստոնէութիւն, վերջապէս Ե-ի համար «աշխատաւոր եղբայրութեան նշանակութիւնը», որի նպատակն է նախապատրաստել ունկընդիրներին յիշեալ աշխատաւոր եղբայրութեան անդամակցելու:

Ս. Յ.



ՀՐԷԻՅ ՈՒՍՈՒՄԸ ՈՒ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԳԵՐՄԱՆԵՒԱՅՈՒՄ.

Գերմանիայում արդէն կարլոս մեծի ժամանակից և առաջ ևս հրէայք զազթած են համարվում: և այդքան հնազոյն զարերից նոցա ուսուցման կազմակերպութեան մասին տեղեկութիւններ են հասել մեզ, որոնք մասամբ յիշեցնում են նաև մեր հին հայոց ուսուցման կազմութիւնը:

Նոցա տարրական ուսուցումը հնազոյն ժամանակներում այսպէս է եղել:

Հինգ կամ 6 տարեկան հասակի մանչ — տղային ուսման էին ընծայում մեծ հանդիսով Պենտեկոստէի կամ յայտնութեան տօնի ժամանակ: Զարդարուն պատմութեան հազրած, նորան տանում էին Աստուծոյ տաճարը և կանգնեցնում էին հնգամատանի զրքակալի առաջ, ուր որ պիտի կարդացուէր աւուր պատշաճի ընթերցուածքը (տասնարանեայ պատգամը): Ապա յանձնում էին վարժապետին, որ և զգուած տանում էր նորընծային և նստեցնում էր ուսման: Վարժապետը աւելում էր մի տախտակ (հայոց մէջ թաթ

կողուածը)՝ ուր գրուած էր լինում երրայե-
րէն այբուբենի առաջին և վերջին չորս
տառերը՝ ապա և հետեւեալ խօսքերը. «Եւ
պատուիրեաց մեզ Մովսէս (զօրէնս)՝ զժա-
ռանդութիւն ժողովոյն Յախրայ» կամ հե-
տեւեալը. «Եւ կոչեաց Տէր զՄովսէս և խօ-
սեցաւ ընդ նմա ի խորանէ անտի վկայութեան
և ասէ. խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի»
և մի առ մի անուանում էր տառերը՝ որ մա-
նուկը պէտք է բերան առնէր և կրկնէր տախ-
տակի մնացած բովանդակութեան հետ ի
միասին: Տախտակի վերայ մեղր էր քսած՝ որ
մանուկը պէտք է լղէր՝ որպէս թէ ուսման
քաղցրութիւնը ճաշակելով: Ապա մանուկը
ընծայ էր ստանում մեղրահացի բլիթ և ձու,
որոնց վերայ գրուած էին լինում նոյնպէս
ս. Գրոց պատգամներ. այս ամէնը կարգում
էր վարժապետը՝ աշակերտը բերան էր ասում
որը կրկնելուց յետոյ ուտել կարող էր ստացած
ընծաները: Մանուկը պէտք է արտասանէր նաև
մի քանի խորհրդաւոր բառեր և «հրաժարիք
ի սատանայէ»՝ որպէս զի բերան առածները
չմոռանայ: Վերջապէս նորան տանում էին
գետի ափով պտանցնելու՝ որովհետև հնգա-
մատեանը նման է ջրին և Սող. առ. այսպէս
է օրհնում: «Բղխեացն քեզ ջուրք ի քում-
մէ աղբիւրէ» և ի քո հրապարակս գնացնն
ջուրք քո»:

Ուսումն սկսում էր հեգելով: Այբու-
բենը կարգացնում էին ուղիղ և անդրադարձ
կարգով կամ այլ և այլ կերպերով դասաւո-
րած և խմբակցած, զոր օր. ա—բ—ը—վի
և այլն: Առաջին ուսումը աւելի հետաքրք-
րական առնելու համար՝ ամէն մի գրին խոր-
հուրդ և իմաստ էին տալիս (այնն ուսուցա-
նէ քեզ ...), կամ անոնց թուական նշանակու-
թիւն էին յայտնում (այբժեճեռա = 1—10—
100—1000)՝ այնպէս որ ամբողջ այբուբենը
մի տեսակ բարեպաշտական հրահանգ էր նը-
կատվում և խրատում էին հետեւեալ օրի-
նակով. Ալէվի նշանակէ մի է Աստուած,
Բեթ նշանակէ 2 է վարդապետութիւն (հըն-
գամատեան և աւանդութիւն), Գիմէլ նշա-
նակէ ս. Գրոց 3 մասունք (հնգամատեան, մար-
գարեութիւնք և սրբազիրք կամ շինողականք,
սյսիւնքն հին կտակարանի մնացած մասունք)

և այլն: Երբ որ աշակերտը զիր կապելն ա-
ւարտում էր, սկսում էին հնգամատեանի
ընթերցանութիւնն ու գերմաներէն լեզուով
թարգմանութիւնը: Ս. Գրոց ուսման սկիզբն
էր կազմում Մովսիսի Ղևտացւոց զիրքը՝
պատարագաց զիրքը՝ այն խորհրդով թէ սուր-
բերը (անմեղ մանուկները) նախ պէտք է զբաղ-
ուին սրբութեամբ (պատարագով): Ուսման
յառաջադիմութեան աստիճանները այն էին
լինում որ նախ ուսուցանում էին հատ հատ
բառերի նշանակութիւն (պեռուշ համմիլթ),
ապա նախադասութեան և տան կապակցու-
թիւնը (խիթուր հապպեգուկիմ), վերջապէս
մի ամբողջ հատածի կապակցութիւնը (խիթ-
ուր հայիսիանիմ). և եթէ ասէին թէ աշա-
կերտը խիթուր է կարգում այս նշանակում
էր թէ նա առաջ է գնացել: Հսկամատեանից
յետոյ առաջ էին բերում աւանդութեան
ուսումը, ապա և հեշտ մեկնութիւնները (այդ
երեք ուսմունքը կոչվում էր՝ Թորա, Միշնա,
Տալմուդ): Տարրական ուսման բովանդակու-
թիւնը այսբան էր, եթէ հետը հաշուենք նաև
երրայեցւոց աղօթագրքի թարգմանութիւնը:

Առ հասարակ ուսուցիչը (մեղամէղը)
համայնքից չէր կարգվում, այլ մի քանի ծը-
նողներ իրանց զաւակների կրթութեան համար
մի մարդ էին վարձում: Այլ և ընկերութիւն-
ներ էին կազմվում որոնց հոգար պիտե լինէր
աղքատ մանուկների կրթութիւնը: Այս ամ-
էնը աւելի մանչերի կրթութեան էր վերա-
բերում: Աղջկերանց կրթութիւնը մասնաւոր
ընտանեկան գործ էր համարվում և լոկ գրել
կարող ու աղօթք սովորելուց աւելի ծաւալ
չէր ունենում: Բայց այսպիսի մասնաւոր փոյ-
թը երբեմն այնքան էր ընդարձակվում որ
կանանց միջից դուրս էին գալիս կատարեալ
ուսումնականներ: Թուարանութիւնը մի ա-
ռանձին ուսմունք չէր համարվում այլ ապա-
գայում առեւտրականներ զառնալու համար՝
մանչերը կողմնակի փոքր ինչ վարժութիւն էին
ստանում: Գերմաներէն լեզուի հրահանգը
անարգուած էր. ամէն տեսակ առեւտրական
թղթերը երրայերէն էին գրում, և ոչ թէ
գերմաներէն, թէպէտ իրանց խօսակցական
լեզուն աղձատած լեհարարբառ գերմաներէնն
էր: Բայց որովհետև ամբողջ գերմանական վի-

պասանութիւնը հրէայք ինքնուրոյն փոխա-
 ցրութեամբ հրէից համար էին կազմել ար-
 ձակ և չափաբերական ձևով, ապա ուրեմն
 պէտք է ենթադրել թէ ոմանք ինքնուսուց-
 մամբ ձեռք էին բերում գերմաներէնի և գեր-
 մանացոց զրականութեան լաւ հմտութիւն:

Բարձրագոյն ուսումը՝ այսինքն ամբողջ
 Տալմուդը՝ աւանդում էին բարբիները: աւան-
 դելի տեղը կոչվում էր քեթամիդրա՛ (գարա-
 տուն), իսկ հաստատութիւնը կոչվում էր
 եշիբա (արաբ. մէջլիս), սկազեմիա, որի տե-
 սուչը անուանվում էր բօշ եշիբա: իսկ ուսա-
 նողը՝ քախուրիմ: Այս տեղ աշխատում էին
 բանախօսութիւններով և վիճարանութիւննե-
 րով Տալմուդի բանալին տալ և հոգևոր աա-
 րակոյաների մասին անկախ կերպով դատելու
 համար հասունացնել: Այս կերպով Տալմուդը
 ընդարձակվում էր յաւելուածներով, որոնք
 կոչվում էին Տոսաֆօտ: Ականաւոր բարբիներ-
 ից խմբագրուած տոսաֆօտները տետրակնե-
 րը ձեռքէձեռք էին պտտում:

Գրքերի և գրութեան պարագաների մա-
 սին հրէայք ունէին յատուկ գաղափարներ:
 «Բնաւ պէտք չէ խնայել գրքերը (ձեռագիր-
 ները) ուրիշին փոխ տալու, երկիւղ կրելով
 թէ գիրը կը ջնջուի: Աւելի լաւ է գիրը ջըն-
 ջուի քան գիրքը չգործադրուի: Եթէ երկու
 որդկերանցից մէկը յօժարութիւն ունենայ գրու-
 քեր փոխ տալու, իսկ միւսը ոչ, հայրը պէտք է
 իւր գրքերը առաջին ժառանգութիւն թող-
 նէ: Գիրքը փոխ տալիս պէտք է գերադասել
 աւելի այն մարդուն, որ ամենայն օր գործ-
 ածելու սովորութիւն ունի քան որ այդ-
 պիսի սովորութիւնից զուրկ է: Որքան որ մի
 գրքից աւելի օրինակներ հանուին, այնքան
 աւելի կը լինի սեփականատիրոջ վաստակը:
 նա ուրեմն երբէք չպէտք է զլանայ փոխ տալ
 այն զգուշութեամբ թէ զուցէ գիրքը վը-
 նասուի: Գիրքը միշտ պէտք է պատուի մէջ
 պահուի: Տետրակը խաղելու ժամանակ՝ մի
 ուրիշ ձեռագիր տակը չպէտք է դրուի և ոչ
 էլ ամբողջ գիրքը կամ անոր անգիր մնացած
 թերթերը պղծութեամբ գործածուի անպա-
 տիւ նպատակի համար: Այն գրչի հետ, որով
 գրվում է ս. գիրքը, նոյն իսկ եթէ փչանայ,
 անփութութեամբ չպէտք է վարուիլ, զոր օր-

դեանի վերայ ընկած չպէտք է թողնել: Տա-
 սեր և բառեր ցուցանող փայտի կտորը պէտք
 է սրուի, որով սրութիւն է դառնում այն,
 և ուրեմն քերուածքը չպէտք է թափել գեանի
 վերայ: Նոյնը պէտք է ասել նաև գրչի հա-
 մար: ս. գիրքը օրինակելու համար գործա-
 ծած գրչով չպէտք է քորել մարմինը կամ
 ծակել մարմնի ուռուցքը: Ոչ մի հոգևոր
 գրքի մէջ չպէտք է նշանակուի մի որ և է հա-
 շիւ կամ պարտք: Արեգակից կամ միսից պաշտ-
 պանուելու համար գործ դրեցէք ոչ թէ գիր-
 քը, այլ մի ուրիշ բան: Գրքերը ուտելի-
 դէնների հետ չպէտք է պահպանել, ապա թէ
 ոչ ասոնց հոտից միները կը հրապուրուին և
 հետը գրքեր էլ կը կրճոտեն»:

Այս էր հին ժամանակների նկարագրու-
 թիւնը: Այնուհետև երկրորդ շրջանը՝ յե-
 տադիմութեան շրջան էր, որ հետզհետէ զար-
 հուրելի սաստիկութիւն ստացաւ հրէից հա-
 մայրների մէջ, մանաւանդ դաստիարակու-
 թեան նկատմամբ, այն ևս շատ մահ-ից բու-
 կած (1348) և այդ պատճառով հրէից
 դէմ ծագած հալածանքների ազդեցութեամբ:
 Բայց և այնպէս այդ ժամանակ տակաւին ան-
 զգալի էր կամ մեծ չէր հրէաների և քը-
 րիստոնեաների ուսման և կրթութեան զա-
 նազանութիւնը: Մինչև այդ միջոցները գեր-
 մանական ուսումնարանները ինքնին արդէն
 այնքան անկարգ էին «իսկական» (այսինքն՝ լա-
 տինական) ուսումնարանների համեմատու-
 թեամբ, որ հրէական ուսումնարանների պա-
 կասութիւնները շատ էլ նշմարելի չէին:
 1523-ին քարոզիչ Սեբաստիան Լոտցերը
 գովելով հրէաների կրթութիւնը, ասում է,
 «Նորա անշուշտ ուսումնասէր են. նորա իրանց
 զաւակներին ի մանկութենէ սովերեցնում են
 իրանց օրէնքը խելամտութեամբ» — Սակայն
 զիտութեանց վերահաստատութիւնից յետոյ
 գործն այլ կերպարանք ստացաւ: Մինչպես
 քրիստոնեաների մէջ մարդկական կոչուած
 հրահանգները (հումանիզմուս) դպրոցական
 կազմութեան աւանդելին նոր և ուսումնա-
 կան հիմք, հրէաները իսպառ անմասն մնա-
 ցին այսպիսի փոփոխութիւնից իրանց տոհ-
 մային խտրութիւններով և զատուցմամբ, որ
 նախ բանի պատուաստուեցաւ իրանց վերայ:

ապա իրանք յօժարակամ պինդ պահեցին իւրեանց մէջ. այս բանի հետեանքն այն եղաւ որ ոչ միայն քրիստոնէական և հրէական կրթութեան մէջ եղած ճեղքը հեղհեղ աւելի լայնացաւ, այլ և վերջինը գնալով միշտ գէպի կորուստ մղուեցաւ, որից փրկուել չը կարողացաւ մինչև որ Մ'ոգէս Մենգէլսոնի աղղած նորոգութեան շարժումը չսկսուեցաւ:

Այս ժամանակի զրազիտութեան ուսուցման եղանակի մասին այսպէս են հաղորդում. «Երբ որ ուսուցիչը մանուկներին այրութեն է սովորեցնում, ասում է, թէ զիմնը կողքից կախ տուած պարկ ունի (A), դալէթը կարճ ոտք ունի (B), ալէփը նման է մի մարդու որ կուժը ձեռքին ջուր է լըցնում, իսկ մի կուժ էլ մէջքին ունի (C): Սեթի բերանը լայն բաց է արած (D), պէն գրեթէ փակ բերան (E) ունի: Տարրական ուսման մասին գանդառներ շատ էր լսվում. «Առաջ մանուկներին ուսում էին տալիս կանոնաւոր կերպով. հինգ տարեկանին ուսուցանում էին ս. գիրք, տասը տարեկանին միշնա, տասնուհինգ տարեկանին տալմուդ: Այսպէս մանուկի վերայ բեռ էին գնում այնքան, որքան որ իւր հասակով տանել կարող էր: Իսկ մեր արիւմտները հիմա խոտորնակ ձանապարհով են գնում: Մանուկի հետ նոքա քաղում են փոքր ինչ ս. գիրք շարժական բաժնից, ապա կիսատ տեղում ընդհատում են և հետեւալ շարժ սկսում են յաջորդ շարժական բաժինը նոյնպէս կցատուր, և երբ որ տարին լրանում է՝ մանուկը մոռացած է լինում ըսկիցը: Այսպէս է շարունակվում երկրորդ, երրորդ, չորրորդ տարին և յն: Հասակն առած ազան երբ որ ս. գիրքը աւարտում է, յիշողութեան մէջ բան չի ունենում... և տալմուդից էլ նա սոսկ բառեր է արտասանում, աւարկայի մասին բնաւ ոչ մի պատկեր չկաղմկով: Այս ուսուցիչները երկու աչքով կուրացել են»: Ուսման թշուառութիւնը շատ պատճառներից է ծագում, որոնցից յիշենք մի քանիսները: Ուսուցիչը ստիպուած է լինում շորքորթել և՛ ծնողին և՛ աշակերտին, որպէս զի իրանից չպահասի աշակերտների թիւը. ծնողներից շատերը այնքան աղքատ են լինում, որ չեն կորողանում իրանց զա-

ւակների համար լաւ ուսուցիչ ելաւ ընկերակիցները գտնել, ուսուցիչը միշտ տագնապի մէջ է և նեղութիւններ է կրում բնակարանի անհաստատութեան պատճառով. ուսուցիչը նոյն սենեակումն է դաս աւանդում, ուր որ բնակում են իւր կիներն ու երեխաները. նա իւր վարձը ժամանակին չի ստանում:

Բարձրագոյն ուսումն էլ նոյն անկման վիճակի մէջ է: «Տգէտ տեսուչների թիւը խիստ մեծ է, բայց ոչ ոք իւր պատիւը չի ձանաչում: Ով որ պաշտօն է ստանում, նա իսկոյն աղա է դառնում, իսկ բախուրիմների (ուսանողներին) դարձնում է իւր ծառայ... Մի մարդ, որ տալմուդի իմաստը չի որոճել, համայնքի և զիտնականների վերայ տէր և իշխան է դառնում, ումն ուղում է բանադրում է, ամէն տեսակ գայթակղիչ բաներ է գործում, ուսանող է ձանաչում այն երիտասարդին, որ իւր մօտ չի ուսանում, որպէս զի փոխարէնը վարձ ստանայ...» Այս շրջանի բանախօսութիւնները ոչ այնքան հիմնաւոր գիտութիւն աւանդելու էին նըպաստում, որքան վարժեցնում էին խորամուխ վայրբանութեան, որով ընդունակութիւն էին տալիս՝ մանրակծծի նրբազնութիւններով և օտար ու անյարիր բնաբանների ճարպիկ կցկցանքներով՝ շէմքուցիչ իմացական պատկերներ կարկատելու, ուր որ քաջավարժը պարժենալով տեսնում էր, որ կարողանում է իւր սրամտութիւնը սփեւտարանութիւններով փայլեցնել և վարպետութեամբ բանեցնել: Վիճարանութիւնը խիստ սաստկանում էր և յաճախակի ականջ խլացնող կազ և կռուի կերպարանք էր ստանում, որ շատ անգամ ծեծով ևս վերջանում էր: Բարբիներից մէկը գանգատվում է. «Ժամանակիս իմաստուններից շատերի հետ խորհրդակցել եմ մովի սրամտութեան վարժեցնելու և աղաւաղ վիճարանութեան սովորութիւնը վերացնելու մասին՝ վասն զի իմ կարծիքով այդ բանը սաստաժամարտութիւն է զիտութեամբ սակայն ևս չկարողացայ ոչինչ դարմանել: Տալմուդի զատ զատ դպրութիւնները որոշվում էին կամ տեղով, կամ բնորոշ ձևովան յատկութեամբ, այնպէս որ եթէ ոմանք կոշվում էին «նիւրնբերգի» «աուգաբուրգի»

միւսները անուանվում էին «խոր ակից խօսող», «ջրից ծարաւ յետ բերող» «զլուխը դրում շինող»։ Ուսանողներն էլ իրանց վարպետներից յետ չէին մնում. նոքա հետամուտ էին նորացոյց հնարներին» սյսինքն թէ ինչ մի սրամիտ հարցմունք, կամ պատասխան, կամ վճիռ կայ իմանալու, որ իրանց տեսրի մէջ նշանակէին և դպրոցից դպրոց թափառելով՝ շատ անգամ վարպետից զողացած նոր գիւտով փայլէին, ճառախօսների բերանը փակէին, մարդու տալու գասերց հարուստ ծնողների հաճութիւնը գրաւէին և օգտաւէտ ամուսնութեան գուռը բանային։— Այսպիսի վարկպարտի ուսման մասին արտունջները լսվում են մինչև նոյն իսկ ԺԹ դարու շարունակութիւնը։

Երրորդ շրջանն սկսվում է ԺԹ դարու վերջերից՝ երբ որ գերմանական հրէաները աւելի և աւելի հաղորդակից են դառնում ժամանակակից լուսաւորութեան։ Այս փոփոխութիւնը ըստ մեծի մասին Մոզէս Մենդելսոնի դրդմամբ շարժուեցաւ, թէպէտ ոչ առանց մաքառումների շարունակուեցաւ, վասնզի մի կողմից բարեպաշտ հրէաները արհամարհում էին գերմանական կրթութիւնը, միւս կողմից հրէից քաղաքական զատուած գիրքը ինքնին նպաստուոր էր աննդական դաստիարակութեան, որը պինդ պահուելով՝ մեծամեծ շարիքներ էր պատճառում։ Մանաւանդ որ լոյսը վազուց սկսել էր սքսիւնուիլ, ժամանակի բերմամբ արդէն շատոնց ի վեր սկսել էին հաս հատ ինքնուս հրէայ ուսումնականներ երեսպ գիտութեանց ամենայն ճիւղերում, մինչև որ ԺԹ դարում այնքան բազմացել էին ականաւոր գիտնականներ և լուսաւոր հրէաներ, որ նոցանից շատերը գերմանական գրականութեան գիւցազունների բարեկամական կաճառի մէջ պատուաւոր տեղ բռնեցին, և ոչ այսքան միայն այլ յայտնի է, որ Շիլլերի և Գեթեի հետ ի միասին՝ գերմանական լուսաւորութեան ազգու զարկ էին տալիս նոյն իսկ անուանի հրբէայ կանայք, որոնք իրանց լուսամիտ դադափարներով և կատարեալ գիտնականութեամբ անկեղծ յարգանք էին վայելում և զգալի դրոշմ թողեցին իրանց ժամանակի վերայ։

Մանաւանդ Ֆրանսիական գրականութիւնը խիստ էր գրաւում գերմանական հրէաներին, որ բարբիներին հասաչել էր տալիս թէ «հիմա Ֆրանսերէնն ու այլ լեզուները զլուսաւոր ուսմունքներ են դարձել, իսկ հնգամատեանը երկրորդական հանդամանք է համարվում»։

Բայց Գերմանիայում հրէական դաստիարակութեան և ուսման արմատական վերանորոգութիւնը՝ իսկպէս առաջ եկաւ հետեւեալ քաղաքների ընտիր ընտիր ուսումնարանների հիմնադրութիւններով. 1778-ից ըսկասծ Բերլինը, Բրեսլաւը, Դեսսաւուն, Հարցի Զէլզէնը, Վոլֆենբիւտէլը, Փրանկֆուրտը ժամանակի բարձր պահանջների համեմատ լաւ կազմակերպուած հրէական ուսումնարաններով զարդարուեցան։ Դոցանից առաջին մասին մի քրիստոնեայ ուսումնական հետեւեալ վկայութիւնն է տալիս. «Եթէ այս կարեւոր երեւութի աղբիւրը քննենք, այն պէտք է վերնաւենք մեր սերնդեան իմաստունի՝ մեր ժամանակի Սոկրատէսի՝ Մոզէս Մենդելսոնի կրճքի մէջ»։ Տէրութիւնները օգտաւէտ էին համարում և խրախուսում այդ ուսումնարանների բարգաւաճութիւնը։ Բրիստոնեայ ծնողները չէին վարանում այդ ուսումնարաններում դաստիարակել տալ իրանց զաւակներին, մինչև իսկ մի քանի տեղերում աշակերտաց կէսը քրիստոնեայ մանուկներ էին։ Ընդհանրապէս բոլորի մէջ աւանդելի ուսմունքները ասոնք են՝ խրայլլական կրօն, քրիստոնէական կրօն, երկայերէն, գերմաներէն, Ֆրանսիերէն, անգլիերէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա, բնական գիտութիւններ, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, մարմնամարզական խաղեր, դասարանների թիւը ամէնի մէջ ինն է, և շատերը երկու սեռի բաժիններ ունին։ 1884-ին գիտնականներից մէկը այդ ուսումնարանների առթիւ ասել է. «Անոնց պատմութիւնը փոքր ձևով հրէից քաղաքակրթութեան 50 տարուայ պատմութիւն է»։

Բացի յիշատակած ուսումնարաններից, հրէական ամէն մի համայնքի մէջ մի մի տարրական ուսումնարաններ հիմնուեցան մի և նոյն հոգեով։ Աւսարիայում 1782 թ. այգպիսի տարրական ուսումնարաններին արտօնութիւն

չնորհուեցաւ որ այն տեղից մանուկները ազատ մուտք ունենան պետական գիմնազիոններում և համալսարաններում, որով այժմէական կրթութիւնը լայն սփռուեցաւ հրէից հասարակութեան մէջ և ամենուրեք բարի արգիւնքներ երեւեցան:

Չորրորդ շրջան: Այն ինչ պետութիւնը ծանաչեց հրէաների քաղաքական և քաղաքային իրաւանց հաւասարութիւնը, այսինքն գրեթէ 1848 թ.-ից յետոյ, նոցա դաստիարակութեան ուսման կազմակերպութեան համար սկսուեցաւ մի նոր շրջան, որով համարեա թէ բոլորովին վերացաւ նախկին խորթութիւնն ու զտուցումը: Գերմանական հրէաները (նմանապէս և Աւստրիայում) ենթարկուած են պարտադիր ուսման, յաճախում են հասարակաց քաղաքային և պետական ուսումնարանները, գիմնազիոններն ու համալսարանները, նախանձախնդիր են գերմանական կրթութիւնը վայելելու: որովհետև իրանք իրանց գերմանացի են զգում և ուզում են գերմանացի ևս ծանաչուիլ: Թէպէտ առաջուայ ժամանակներից ծագող դաւանական ուսումնարանները համայնքների հաշուով շարունակ պահպանվում են, բայց այդպիսիներից նորերը էլ չեն աւելանում: Եւ այս բանը զարմանալի չէ, որովհետև ինքը պետութիւնը հոգս է քաշում իւրայեւացի աշակերտների և աշակերտուհիների կրօնական ուսման մասին ժողովրդական քաղաքային և միջնակարգ ուսումնարաններում: Աւստրիայում օրէնք է սահմանած, որ եթէ մի գլխուցում իւրայեւացի աշակերտների թիւը քսանից անցնի, գլխուցը պարտաւոր է հոգալ նոցա կրօնական ուսումը: Իւրայեւացի կրօնուսոյցները գրեթէ հաւասար չափով իրաւունքներ են վայելում քրիստոնէայ կրօնուսոյցների հետ: Այսպէս ուրեմն սոսկ հրէական ուսումը սահմանափակուել է միայն այն չափով, որ այնու իրանց կրօնական դաստիարակութեան պէտքը լրանայ: Այդ բանին են ծառայուլ ա. հոգեւոր ուսումնարանները: Թէպէտ հասարակաց ուսումնարաններում իւրայեւացի աշակերտներին իրանց կրօնն է աւանդվում, սակայն բնականաբար այդ կրօնի համար գոյութիւն պիտի ունենան հոգեւոր ուսումնարաններ:

որ և ամենայն հրէական համայնք իւր պիտոյից համար պահպանում է: Երրուցերէնը, որ հոգեւոր պաշտաման և ս. Կրօն լեզուն է, հարկաւ հրէական հոգեւոր կրթութեան էական մասն է կազմում: Եւ բ. Աստուածարանական դպրոցներ, ժամանակի պահանջների համեմատ գիտնական կրօնուսոյցներ և բարբիներ պատրաստելու համար հիմնուել են այդպիսի գլխուցներ կասեղում, Բերլինում, Միւնխտերում, Հաննովերում, Բրեսլաւում, Վիեննայում, որոնց ծախքը մեծ մասով ժողովուրդն է քաշում, բայց տէրութիւնն էլ մասամբ աւելացնում է վերան իւր նպաստները:

(Encyklopädisches Handbuch der Pädagogik).

Ս. Մ.



ՄԻԼԻՌՆԵՆԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԳՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ:

Այս վերնագրով ակադեմիկ Ի. Թ. Եանժուլը Մոսկուայի պատմաբանական թանգարանի դահլիճում, այս տարուայ փետրուարի 21-ին մի հրապարակախօսութիւն կարդաց, որից քաղում ենք հետևեալը:

«Մեծ. պ. պ.—սկսեց յարգելի դասախօսը —գիտէք, թէ որքան մեծ է կուլտուրական աշխարհի հարստութիւնը և ինչպիսի թուով կարելի է բնորոշել այն Ալիճակագրների հաշուով լուսաւոր տէրութիւնների հարստութիւնը հասնում է 703 միլիարդ. հսկայական գումարի, Արպէս զի մի փոքր գաղափար կազմէք այդ գումարի մեծութեան մասին, բաւական է ասել, որ եթէ այդ փողերը դարձնէք ուսաց արձաթեայ բուրլիանոցներ և իրար վրայ դարսնէք, այն ժամանակ կ'ստանանք մի այնպիսի սիւն, որի բարձրութիւնը 5 անգամ աւելի կըլինի երկրագնդի և լուսնոյ մէջ գտնուող տարածութիւնից, իսկ եթէ միևնոյն գումարը դարձնէք թուղթ հարկւր ուրլիանոցներ և փոնիք գետնին իրար մօտ, նոքա կը բռնեն մի այնպիսի հրապարակ, որը երեք անգամ մեծ կը լինէր ամբողջ Մոսկուայի բլանած տարածութիւնից, Տեսնենք այժմ՝ թէ ինչ կերպով է բաժանուած այդ հարստութիւնը տէրու-